

ՈՐՈՇՈՒՄ N 3/2

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Տասնութը նոյեմբերի 2014 թվականի

<<ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ, ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԲԱԺԻՆ>> ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ, ԱՅԴ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ <<ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ>> ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 30-րդ կետի 2-րդ ենթակետով և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. Լուծարել «Երևանի պետական համալսարանի գնումների, մատակարարման և պահեստավորման բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը և լուծել այդ բաժնի աշխատողների աշխատանքային պայմանագրերը:
2. Ստեղծել «Երևանի պետական համալսարանի գնումների պլանավորման և պահեստավորման վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Ն. Միմոնյան